«ՉԵՄՊԻՈՆ» ԱՌԱՋԱՐԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Բոլոր անձանց, ովքեր «Չեմպիոն» առաջարկի շրջանակներում կբաժանորդագրվեն «Դուո սիրելի» կամ «Տրիո» ծառայությունների փաթեթներին՝ 1 տարի բաժանորդագրության պայմանով, սկսած 01.12.2015թ. մինչև 31.12.2016թ. ներառյալ ժամանակահատվածում, տրամադրել տվյալ սակագնային փաթեթով սահմանված Ինտերնետի արագության կրկնապատիկ արագություն ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 տարվա ընթացքում:

2. Եթե Բաժանորդը սույն պայմանների կետ 1-ում սահմանված կարգով միանում է «Դուո սիրելի» կամ «Տրիո» ծառայությունների փաթեթին և ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 տարվա ընթացքում ծառայությունների մատուցումը ժամանակավորապես կասեցնում է կամ վճարումների ուշացման պատճառով ծառայությունների մատուցումը կասեցվում է, տվյալ սակագնային փաթեթի շրջանակներում տրամադրվող կրկնապատիկ արագության ժամկետը չի երկարաձգվում ծառայությունների մատուցման կասեցված ժամանակահատվածի տևողությամբ:

3. Եթե Բաժանորդը օգտվում է «Հավելյալ արագություն» ծառայությունից և միանում է «Չեմպիոն» առաջարկի շրջանակներում սահմանված պայմաններին, ապա կրկնապատկվում է տվյալ սակագնային փաթեթի հիմնական պայմաններով սահմանված Ինտերնետի արագությունը, իսկ արդեն իսկ ակտիվացված «Հավելյալ արագություն» ծառայության շրջանակում տրամադրվող արագությունը գումարվում է «Չեմպիոն» առաջարկի շրջանակում կրկնապատկված արագությանը:

4. Բաժանորդի Ինտերնետի արագությունը, որը ձևավորվում է «Չեմպիոն» առաջարկի շրջանակներում տրամադրված արագության ու ձեռք բերված Հավելյալ արագության հանրագումարով, չի կարող լինել ավելի քան 100 Մբ/վ:

5. Օպերատորի և Բաժանորդի միջև բոլոր այն հարաբերությունները, որոնք կարգավորված չեն սույն պայմաններով, կարգավորվում են Օպերատորի կողմից հրապարակված և Բաժանորդի կողմից ժամկետային պայմանագիրը կնքելու պահին գործող խմբագրությամբ էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով, ինչպես նաև Օպերատորի կողմից հրապարակված ցանկացած այլ պայմաններով, որոնք չեն հակասում սույն պայմաններին:

6. Սույն պայմաններում բոլոր հասկացությունները կիրառվում են Օպերատորի կողմից էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով սահմանված իմաստով: